

ՄԵԼՍՈՒՄԻ ԱՆՊԱՐ

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-I-AHBAZ

65, Grand'rue de Péra, Taksim, 65

ԱՊՐԵՆԻ ԶԵՆՈՒՄԻ ԱՊՐԵՆԻ
Խմբագրող իշխան Գրուշ 60 35
Խմբագրող իշխան Գրուշ 85 45
Մեկնալիքի էնկալիք իշխան Գրուշ 20 40

ՉԱՐՇԵՆՊԻՆ ԵՎ ԶԻՆԻՏՈՒՄ ԻՐԱՎԻՍՈՒՄ

ԿԻՆԵԼԵՐԻ ՆԵՐՈՐ ՕԼՈՒՆՈՒՄ

Կանադ իշխան պարբերական թարգմանություն :

مجموعة اخبار

بكاوعلى تقسيم جادوى نومرو ٦٥

ՍԽԱԿԱՅԼԵՐ

Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը մեծաւ մասամբ, չըսեմ բոլորովին, ապակաւին խաղէ է, անվարժ և միանգամայն անտեղեկ իր անցեղին, սորված չէ թէ ի՞նչ է Հայութիւնը և ի՞նչ է Կաթողիկէութիւնը, որով իր գործառնութեան մէջ զրեթէ միշտ կը սխալի, և իր առջեւ չունենալով ուսուցանող մարմին մը որ զինքը ուղղէ, ամէն քայլափոխին, ընդդիմութեան և դժուարութեան կը հանդիպի, և որովհետեւ իւրաքանչիւր ոք իր ըմբռնման համեմատ կը դատէ և իր ըմբռնման հակառակող ո՛ր է ինչ առաջարկութեան առջեւ կը դժկամակը և չուզեր խմբորդի, որով անպատեհութեանց, անվերջանալի գծառնութեանց և յակոճուն վէճերու կ'ենթարկուի շատ անգամ:

Հասարակութիւնը անխորի կը հրաւիրուի Երեսփոխանական ժողովոյ նորոգ կազմութեան համար անդամաց ընտրութեան ձեռնարկել, սակայն Երեսփոխանութեան ինչ ըլլալը, անոր օրէնքը, կանոնը, իրաւասութիւնը և գործելու եղանակը չգիտնալուն, բնականապէս կ'ընտրէ մի միայն այն անձինքը, որոնք կամ ազգականութեամբ կամ առոււտուրի առթիւ և կամ գրաքննութեամբ և բարեկամութեան բերամբ իրեն ծանօթ են և հանկի, թէեւ անտեղեկ ըլլան սահմանադրական օրինաց, մինչդեռ քիչ մը անեղեկութիւն ունեցող անձինք եթէ գտնուին, անոնք ալ կը զրկուին, եթէ ընտրող մարմինը չի գիտեր իր ընկերը, հետեւաբար իր ընտրած մարմինն ալ չի գիտեր իր ընկերը և իր պարտքը, որով երկուքն ալ կը թերանան իրենց գործող մէջ: Օրինակի ազգաւ եթէ հարցուի ընտրող կամ ընտրեալ անձանց թէ Օրինագիրք մը ունե՞նք թէ ոչ: Պատասխան կը տրուի թէ չա՛տ մը կանոնադրութիւններ կան ի գիր անցած, սակայն չենք գիտեր թէ ո՞րն է յարմարը և օգտակարը, եթէ անեղեկութիւն ուզուի թէ յինչ կայացեալ է տեղական և վանական կղերքին մէջ եղած տարբերութիւնը, անոնց պաշտօնը, պարտքը, իրաւունքը, անոնց վրայ Կ-Պատրիարքի իրաւասութիւնը և Վարչական ժողովոյ անոնց նրկատմամբ բռնելիք ընթացքը, ա՛տ ամէն բերան լուրջութեան կը դատաւարաւորի, իսկ եթէ առաջարկուի այսպիսի անպատեհութեանց և անխմանութեանց առաջը առնելու նպատակաւ որոշ կանոններ գտնել և հաստատել, նոյն ընդ նոյն դժուարութիւններ կը ծագին ըսելով, ժամանակին ընթացքին և պաշտօնողութեան կը յանձնուի ինչպիսիք, դեռ ուրիշ ասոնց նման հարցմունքներ և անյարմար պատասխաններ:

Այդպիսի անկերպարան և անկարող Վարչութիւնն ի՞նչ կ'սպասուի, բայց եթէ անկարող որոշողութիւններ և յայտնի սքիւտներ, նմանօրինակ պակասութիւններ տեսնուեցան նոյն իսկ Երեսփ. ժողովոյ պաշտօնի գումարման մէջ, ուր միաբերան կ'որոշուի Ատենապետ մը ընտրել, սակայն առանց որոշելու Ատենապետի դերը, կարողութիւնը, սահմանը և ինչ կ'են, Երեսփ. ժողովոյ առաջին պարագն էր ընտրելոց օրինաւորութիւնը քննել, ուրիշ սահման

նադրական ազգաց մէջ ընկալեալ կանոնաց համեմատ, նոյնպէս Ազգային Սահմանադրութեան արամադրութեանց պայմանները ուշի ուշով աչքէ անցնել, քննել ընտրելոց տարիքը, վճարած տուրքը, բարի վիճակը, հպատակութիւնը, թէ եկեղեցական իրաւասութեան և թէ ժամանակաւոր իրաց մէջ, ա՛տ զանցառութիւնը:

Երեսփ. ժողովոյ մէջ խօսք կ'ըլլայ Կանոնադրութիւն մը յօդակելու և կամ յօդակելու կանոնադրութիւնը վերաքննելու մասին, շատ լաւ, սակայն նոյն կանոնադրութիւնը յօդակելու համար ընտրուելիք Յանձնաժողովոյ մասին երկար և անտեղի վէճեր կը ծագին, որոնք չըսեմ տգիտական սակայն կարի ծիծաղելի են, ըստ որում ո՞ր օրինաց վրայ յեցեալ կ'առաջարկուի նոյն իսկ Երեսփ. անդամաց մէջէն Յանձնաժողով կարգել, արդեօք Հասարակութիւնը բոլորովին անտեղեկ և անընդունակ է, և կամ միմիայն 50-60 երեսփոխանաց վրայ իջած է ոգի իմաստութեան, ոգի յաղորդութեան և ոգի կարողութեան, դարձեալ նոյն ժողովոյ մէջ, Յանձնաժողովոյ համար եկեղեցական կարգաւոր կամ ալ հարցը խնդրոյ առարկայ կ'ըլլայ, թէեւ ընդհանրապէս կ'որոշուի եկեղեցական եւս կարգի, սակայն բաւական է որ այդպիսի Պատկառելի ժողովին մէջ տակաւին կը գտնուի այնպիսի անձինք, որոնք ըստ քննողին կը սեպեն եկեղեցական մարմինը, մերժուելը այն ատեն միայն թերեւս ընդունելի ըլլար, եթէ Յանձնաժողովը մի միայն ժամանակաւոր իրաց համար Կանոնադրութիւն յօդակելու ըլլար, թէեւ այն ալ անտեղի է, քանի որ եկեղեցական ալ մասն ունի ժամանակաւոր իրացնէ և անդամ է ընդհանրութեան, վերջապէս Երեսփ. ժողովը, Յանձնաժողովոյ համար իր ուժը անդամաց մէջէն երկու եկեղեցական եւս կ'որոշէ առանց յաւաքաւորի գիտնալու է թէ Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը իւր մէջ ունի Նորիւրապետութիւն մը կամ լաւ եւս բացատրելով եկեղեցական Գերագոյն իշխանութիւն մը, որ բոլորովին տարբեր է Հայոց և Յունաց նուիրապետական իշխանութեանէ, անոնք իրենց վարչութեան մէջ ընտանքներ ուրիշ իշխանութիւնն չեն ճանչնար և ոչ ալ ուրիշ վերապաշտելի կախումն ունին, այլ ինչ որ Յունաց Սինոդոսը և իսլամ ժողովը և Հայոց Երեսփոխանութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ, այն օրէնքի տեղ կ'անցնի և հասարակութիւնը կը պահանջէ, մինչդեռ մեր Հասարակութիւնը իբր Հայ՝ ունի իր սեփական լեզուն, և առանձին արարողութիւնն և քաղաքական սեփական գիրքը, և իբր Կաթողիկէ՝ պարտական է Կաթողիկէ Կրօնի օրինաց և սկզբանց համեմատ հնազանդութիւն մատուցանել վերնագոյն և Առաջին Գլխին: Արդ, Երեսփոխանական ժողովը իբր քաղաքական մարմին մը միթէ կարող է Կրօնական-Եկեղեցական խնդիրներուն միջամտել ըլլալ, և եկեղեցական բարեկարգութեան պայմանները որոշել: Երեսփ. փոխանական ժողովոյ կողմանէ առաջարկուած եկեղեցական երկու անդամները միթէ կրնան բոլոր եկեղեցական Նուիրապետութիւնը ներկայացնել և միանգամայն թէ՛ Սինոդոսի և թէ՛ Կրօնական ժողովոյ համար օրէնքներ դնել, և Երեսփոխանու-

թիւնը ձեռնհաս է նոյն օրէնքները հաստատել և դորձադրութիւնը տարակ, և երկու եկեղեցական անդամները կրնան երեսփոխան ըլլալ, և ժամանակաւոր իրաց վրայ խօսիլ և օրէնքներ դնել, սակայն չեն կրնար օրէնքներ ըլլալ, և կամ Սինոդոսի և Կրօնական ժողովոյ պատկանեալ խնդիրները լուծել և որոշել, այս է ա՛տ ամենամեծ սխալմունքը, որոյ մէջ ընկաւ յանգէտ խեղճ Երեսփոխանութիւնը, և այդ ժողովքին մէջ զանաւոր եկեղեցականներ անկարող եղան կամ չուզեցին Հայ-Կաթողիկէ հասարակութեան Նուիրապետական իրաւունքը պաշտպանել:

Այս նիւթին վրայ ուրիշ առթիւ ընդարձակօրէն պիտի խօսիմ:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՄԸ

Բերա, 20 Դեկտ. 1908

ԱՆԿԱՆ ՀԱՅԵԱՅՔՆԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՊՈՐՇԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Ա.

(4626 թիւն շարունակութիւն և վերջ)

Սակայն ցաւ ի սիրտ կ'ըսեմ թէ երկու կողմին անհամաձայնութիւնն աշխարհականը շատ բան տուած է իր իրաւունքներէն: Վարչական ժողովոյ Ատենապետը բացարձակապէս աշխարհական(*) մ'ըլլալ կը տրամադրէր մեր Կանոնագիրքը, այս պարագան ջնջուեցաւ: Ազգային ինչից մատակարարութիւնն աշխարհականին միջամտութիւնը մերժուեցաւ: Տեղապահ ընտրութիւնը որ կղերական և աշխարհական ժողովներու խորհրդակցութեամբ պիտի կատարուէր, զլանալու համար այս իրաւունքը աշխարհականաց, Փոխանորդ-Եպիսկոպոսը, ժառանգականաբար Տեղապահ նկատուեցաւ (բան մը որ Տէրութիւնը բնաւ չընդունիր): Վարչական ժողովը 12 աշխարհական անդամներէ կը բաղկանար, երկուքը ջնջուեցաւ ու երկու եկեղեցական անդամ գրուեցաւ: Դեռ աւելին կայ, բայց չվերադարձու համար անհատական արժանապատուութիւնները, կը խուսափինք գրի առնել: Ասոնք կըրնանք միթէ ինչ ուժիմին վերադրել, խեղճ ինչ ուժիմ, արդէն քու բազմապիսի մեղքերովդ ծանրաբեռնեալ եւ օտարին յանցանքներն ալ քու վրայ ձգել, է՛հ, ինչ ըսենք ճակատագրիդ է եղեր:

Ասոնք յատկաբար ցոյց կուտան թէ՛ կղերի և աշխարհականի միջեւ խուլ պայքար մը կայ ի սկզբանէ ի վեր, որու բարոյական և նիւթական վնասները միշտ զգալի կերպով Հասարակութիւնն զգացած և տուած է:

(*) Երեսփոխանաց առաջին նիստին մէջ Արտաշէս էֆ. Հիւրմուշէ՝ «Ատենապետը միմիայն աշխարհականներէն կ'ընտրուի» առաջարկին բուն կերպով ընդդիմացերն Մէնէլիւեան, Պատուհասուն և Ճամսէան վ. ները: Յիշեալ յարգելի Վարդապետներուն կը յանձնարարենք կարգաւ Կանոնադրութեան կրկին ծրագրերը:

Թ. Կ. Ն.

Ուրեմն առաջին առթիւ կը մնայ ճշգրէտ այդ երկու անշատ մարմիններուն փոխադարձ իրաւունքները, նախապէս կղերքին իրաւունք մէջ իսկ համեմատութիւն մը գոյացնել, զոր շատ հեշտ է սոյն համեմատութիւնը, ևս ըսեմ սկզբունքի, դուք հասկցէ՛ք ճանաչ տեսակետով: Ունինք Մը-խիթարեան կրկնակ Միաբանութիւններ, որոնք խուսափելով հանդերձ Հայ-Կաթողիկէ Հոգեւոր Պետին իրաւասութիւնէն, իրարու մէջ համեմատ չեն(*), ցարժափ նոյն ուսումը և նոյն սկզբունքն ունեցած ըլլան: Զմեռ, Բօքսանիստա և Անտոնեան քահանայք ալ, մէկգլխու այնչափ հաշտ աչօք չեն նայիր: Գոցէ անոնք ալ այսպէս վարուելու պատճառներ ունենան: Անտոնեանց վրայ չեմ ուզեր կրկին խօսիլ, քանի որ խեղճերը տարիներէ ի վեր իրենց տարտամ վիճակը կարգադրելու բաղձանքէն զատ ուրիշ մտածում չունին:

Արդ, այդքան իրարմէ տարբեր կրկնութիւններ ստացած, նամանաւանդ իրենց անձնական հայեացքներով իրարմէ տարբեր կղերք ունեցող ազգի մը ճակատագրի տակից աւելի բարձր չի կրնար ըլլալ: Ի՞նչ կրնան ընել աշխարհականները երբ իրարու մէջ մի են, մինչ իրենց ալ բազուկը նկատուող կղերք հեռի կը մնայ այդ միութենէ: Զգենք որ աշխարհականն ալ իր կարգին անհաշտ է իր մէջը, ինչպէս տեսնուեցաւ վերջին դէպքերուն մէջ, բայց սա լաւ գիտնալ թէ միշտ կղերքն ազդեցութիւնը մեծ է մեր մէջ: Այդ ազդեցութիւնը շատ բարի և արդիւնաւոր կրնայ ըլլալ, եթէ մաւնաւոր այդ միութիւնն ի բարին գործածէ:

Եթէ իսկապէս մեր նախնիներուն ունեցած համեմատութեան մէկ աստիճանը դը ունեցած ըլլայինք մենք այսօր, հաւանաբար Արեւելքի բոլոր ժողովուրդներուն մէջ ամենէն նախնիներէ դէպքը կը գրաւէինք, և ցարժափ այս կը պակսի մեր մէջ, մեր ապագան ալ կը խաւարի և եւ ինքզինքս արդարացի կը գտնուի իսկապէս յոռետես ըլլալու: Առաջին առթիւ կղերք պէտք է հաշտացնել իր մէջ:

(*) Ս. Յակոբայ տօնին առթիւ Հասարակութեան Անկեղծացի մատրան մէջ կատարուած հանդիսաւոր Հոգեհանգստեան Ս. Պատարագի միջոցին ինչեւ վիճիւնացի վարդապետներու հանդէպ վեհաւար Միլիթարեան վարդապետներու պատկառ ամենուն աչքին կը զարնէր: Պատճառը չենք գիտեր, միայն սա կը դուշապենք թէ՛ վիճիւնացի վրդ, մը շոն պաշտօնի կոչուած ըլլալուն համար չէին սուգած ձոն ներկայ գտնուիլ, գոնէ մենք այսպէս կ'ըմբռնենք իրեն իրենց արտաքին երեւոյթէն դատելով:

Դարձեալ չկրցանք ըմբռնել թէ՛ ինչ նկատուումը Անարատ Յղութեան Գերջ Մեծաւոր Մօր և միւս երեք Գոյրերուն Յիսուսանայ Յոգեւանին առթիւ վիճիւնացի ներկայացուցիչ մը չէին ունեցած: Աւարկութիւն չի վերջներ, եթէ ըսեն թէ՛ իրենց եկեղեցւոյն տօնախմբութիւնն ըլլալով, չեն կարողացած ներկայ գտնուիլ: Կարծենք թուով նուազ չեն այդ վերապահայրերը, կրնային ներկայացուցիչ մ'ուսնեալ այդ ընտանեկան հանդիսին:

Թ. Կ. Ն.

Սէնէմփը նիշայէր ինտէ ապօնման միւս
տէթէրի խիթամ պուան միւնթէմ
պօնէրիմիլլին, ապօնէրիքէրինէ տէվա
իթմէք արգուռնտա օլտգլարը նալտէ
իմրաի իճապընա միւսարաթլարընը իէճ
իտէրից :

Բէճոր և յովր.— Թէէէֆաթըն միգտա-
բը բէվիէէ Կէօրէ կիթմարեճէ արթմադտա-
տըր, Խնասն նաչլարընըն թէաֆէրւնիւ Է-
դալանօր, Բէտի վէ քէօրէքլէրի, գւտտու-
լանմաարլար իչնի թէէէֆ խտիօրլար
կարապալարըն ալթիքնասն ետարալարըն

